

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20. 06. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Զանազյանը, Դ. Մանուչարյանը, Ա. Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Սահակյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ

Օր ա կ ա ր գ ու մ`

1. ԱՄՆ-ի դեսպանի այցը Լոռու մարզ
/Ա.Նալբանդյան/
2. Ս. թ. հունիսի 15-ին կայացած մրցույթի արդյունքի մասին
/Զեկ. Ա.Աղլոյան/
3. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/Զեկ. Ն.Սարգսյան/
4. Համայնքների սեփական եկամուտների մասին
/Զեկ. Հ.Պապոյան/
5. ՀՀ Կառավարության կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին որպես աջակցություն հատկացված PVB-T2 ստանդարտի թվային հեռուստատեսային ընդունիչ սարքերի բաշխման և բուժաշխատողի օրվան նվիրված միջոցառումների մասին
/Զեկ. Ս.Լամբարյան/
6. Քամուց, անձրևներից և սելավներից համայնքային ճանապարհներին պատճառված վնասների վերաբերյալ համայնքներից ստացված տեղեկությունների և կատարված ուսումնասիրությունների մասին
/Զեկ. Ա.Զանազյան/
7. Կարկուտի և ուժեղ քամիների հետևանքով մարզի համայնքների ցանքատարածքներին պատճառված վնասների մասին
/Զեկ Ա.Շահվերդյան/
8. ՀՀ կառավարության 2016թ հունվարի 14-ի 131-Ն որոշման 36-րդ կետով նախատեսված <<Հայաստանի տարածքային զարգացման 2016-2025 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին>> արձանագրային որոշման նախագծի մասին
/Զեկ.Հ.Մկրտչյան/

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա) Հանձնարարել ստորաբաժանումների աշխատակիցներին անձնական գործերում կատարված տվյալների ցանկացած փոփոխությունը սահմանված կարգով ներկայացնել անձնակազմի կառավարման ստորաբաժանում:

/Ժամկետ՝ 2 օր/

բ) ՀՀ Կառավարությունից և այլ գերատեսչություններից ստացվող իրավական ակտի ցանկացած նախագիծ դարձնել քննարկման առարկա ստորաբաժանումներում և սահմանված ժամկետներում ներկայացնել հիմնավոր առաջարկություններ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա 5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզի համայնքներում կարկուտի և ուժեղ քամիների հետևանքով գյուղացիական տնտեսություններին պատճառված վնասների վերաբերյալ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/